Կ Ա Ր Գ

«Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի
հանրապետական 8-րդ մրցույթի անցկացման

Կազմակերպիչներ՝
ՀՀ մշակույթի նախարարություն
Երևանի քաղաքապետարան
ՀՀ մարզպետարաններ
Հայաստանի երաժշտական ընկերություն
«Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիա

1. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի, Արցախի և Ջավախքի հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների, հայորդաց տների, մշակութային և հասարակական կազմակերպությունների մանկապատանեկան երգչախմբերը:

Մրցութային հանձնաժողովի (ժյուրիի) կազմում ընդգրկված դիրիժորների և խմբավարների ղեկավարությամբ գործող երգչախմբերը չեն կարող մասնակցել մրցույթին:

Երգչախմբերի մրցույթն անցկացվում է երկու փուլով և ավարտվում գալա համերգով ու մրցանակաբաշխությամբ:

Երգչախմբերի միջև մրցույթն անցկացվում է 2 կարգով:

1) Կարգ Ա - Երաժշտական և արվեստի դպրոցների երգչախմբեր: Այս կարգում մրցույթն անցկացվում է տարիքային 2 խմբերում՝

ա. փոքրերի երգչախումբ՝ մինչև 11 տարեկան: Այս տարիքային խմբում երգչախմբի կազմի մինչև 10%-ը կարող են լինել 11-14 տարեկան երեխաներ: Այն երգչախմբերը, որոնց կազմում 11 տարեկանից բարձր տարիք ունեցող երեխաների թիվը գերազանցում է սույն կետով պահանջվածից, կարող են մասնակցել Ա կարգի միայն մեծերի երգչախմբերի կարգում:

բ. մեծերի երգչախումբ՝ մինչև 16 տարեկան:

2) Կարգ Բ - Հանրակրթական դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների, հայորդաց տների, մշակութային և հասարակական կազմակերպությունների երգչախմբեր: Այս երգչախմբերը, ցանկության դեպքում, կարող են մասնակցել Ա կարգում:

Առաջին փուլ - անցկացվում է մրցույթի ժյուրիի ներկայությամբ **Հայաստանի Հանրապետության մարզերում, Վրաստանի Սամցխե - Ջավախեթի մարզում, ԼՂՀ-ում և Երևանում:** Յուրաքանչյուր մարզ ինքնուրույն է որոշում տվյալ մարզում անցկացման վայրը: Բոլոր երգչախմբերը մրցում են նույն օրը, նույն դահլիճում, նույն պայմաններում: Առաջին փուլի արդյունքները և հաղթող երգչախմբերը հայտարարվում են տեղում՝ մրցույթից անմիջապես հետո: Առաջին փուլի արդյունքներով ընտրվում են երկրորդ՝ եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք ստացած երգչախմբերը:

Երկրորդ փուլ - անցկացվում է **Երևանում՝** Հայաստանի երաժշտական ընկերության դահլիճում՝ առաջին փուլի արդյունքում ընտրված երգչախմբերի մասնակցությամբ:

Երեք անգամ սույն մրցույթում անընդմեջ 1-ին մրցանակի արժանացած երգչախմբերը կարող են մասնակցել մրցույթին ոչ մրցութային կարգով՝ չակնկալելով մրցանակային տեղ, ինչպես նաև գալա համերգին՝ միացյալ երգչախմբերի հետ կատարելով մրցույթի պարտադիր ստեղծագործությունները: Հաջորդ մրցույթին տվյալ երգչախումբը կրկին կարող է մասնակցել մրցույթին ընդհանուր մրցութային կարգով:

Հայաստանի մարզերից ժամանած երգչախմբերն իրենք են հոգում ճանապարհածախսն ու կեցության հետ կապված ծախսերը:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Առաջին փուլն անցկացվելու է **2015 թվականի մարտի 25-ից ապրիլի 10-ը:**

Երկրորդ փուլն անցկացվելու է **2015 թվականի ապրիլի 25-ին և 26-ին:**

Գալա համերգը և մրցանակաբաշխությունը կկայանա «Արամ Խաչատրյան» համերգասրահում՝ **2015 թվականի մայիսի 2-ին:**

3. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մասնակցության հայտերն (հայտի ձևը կցվում է) **ընդունվում են մինչև 2015 թվականի մարտի 1-ը** Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Վրաստանի Սամցխե-Ջավախեթի մարզի, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կրթության և մշակույթի վարչություններում, Երևանում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և քաղաքապետարանի կրթության և մշակույթի վարչություններում: Հայտը ներկայացնում են կազմակերպության ղեկավարը (տնօրենը) և խմբավարը:

Ներկայացված հայտերը փոխանցվում են Հայաստանի երաժշտական ընկերությանը:

Հայտերում նշվում են այն կազմակերպության հասցեն և անվանումը, որի ենթակայությամբ գործում է երգչախումբը, խմբավարի, կոնցերտմայստերի անունը, ազգանունը, տեղեկույթ երգչախմբի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվելիք երկացանկը:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԸ

Երգչախմբերի համար նախատեսված են առաջին, երկրորդ, երրորդ կարգի մրցանակներ Ա և Բ կարգերում (Ա խմբի համար տարիքային 2 խմբերին առանձին-առանձին):

Մրցանակները շնորհվում են երգչախմբերին և տրվում են այն կազմակերպություններին, որոնց ենթակայությամբ գործում է երգչախումբը:

Խրախուսական մրցանակները նախատեսված են՝

1) լավագույն խմբավարի,

2) լավագույն կոնցերտմայստերի,

3) լավագույն մենակատարի,

4) պարտադիր ստեղծագործության երեք անվանակարգերի լավագույն կատարման համար:

Հատուկ մրցանակներ կարող են սահմանվել այլ կազմակերպությունների, գործարարների և ձեռնարկատերերի կողմից՝ ժյուրիի նշած մասնակիցներին:

Հանձնաժողովին վերապահված է որևէ մրցանակ չշնորհելու, ինչպես նաև ձայների մեծամասնությամբ մրցանակը կիսելու իրավասություն:

Հանձնաժողովը երգչախմբերին գնահատելիս ուշադրություն է դարձնում կատարման հետևյալ բաղադրիչների վրա՝

1) ինտոնացիա,
2) ձայնարտաբերում,
3) տեխնիկական խնդիրների հագեցածություն և հաղթահարում,
4) անսամբլ,
5} արտիստիզմ,
6) մեկնաբանություն:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ԾՐԱԳԻՐԸ

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն տարբեր բնույթի առնվազն 4 ստեղծագործություն, որոնցից մեկը՝ յուրաքանչյուր կարգի համար ստորև նշված մրցութային պարտադիր ստեղծագործություններից, իսկ մյուսը՝ **Ռոբերտ Պետրոսյանի *«Երկիր հայրենի»* խմբերգը (խոսք՝ Կ. Գևորգյանի):** Այս ստեղծագործությունը պարտադիր է **Ա, Բ կարգերում մրցող բոլոր երգչախմբերի համար և նվիրվում է Ռոբերտ Պետրոսյանի ծննդյան 85-ամյա հոբելյանին: Մրցույթային ծրագրի տևողությունը պետք է լինի ոչ ավել, քան 15 րոպե:**

Կարգ Ա-ում հանդես եկող երգչախմբերի կատարման համար **պարտադիր ստեղծագործություններն են՝**

1) **փոքրերի երգչախմբի համար՝ *«Անվերջ հարցեր»* (խոսք՝ Կ. Վարդանյանի, երաժշտությունը՝ Ա. Կարապետյանի),**
2) **մեծերի երգչախմբի համար՝ *«Տխուր հեքիաթ»* (խոսք՝ Կ. Վարդանյանի, երաժշտությունը՝ Ա. Կարապետյանի):**

Կարգ Բ-ում մասնակցող երգչախմբերի կատարման համար **պարտադիր ստեղծագործությունն է՝ «*Հույս Հայաստանի»* (խոսքը և երաժշտությունը՝ Ե. Երկանյանի):**

Ա և Բ կարգերի վերը նշված պարտադիր երեք ստեղծագործությունների կատարումները նվիրվում են Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

Մրցույթի ծրագիրը ներկայացնել կազմկոմիտեին այն հաջորդականությամբ, որով կատարվելու է մրցույթի ժամանակ:

Հայտում ներկայացված մրցույթի ծրագիրը և ստեղծագործության կատարման հաջորդականությունը կարելի է փոփոխել կազմկոմիտեին տեղյակ պահելուց հետո, ոչ ուշ, քան մրցույթից 1 շաբաթ առաջ:

Մրցութային բոլոր փուլերում կատարվող ստեղծագործությունների նոտաները (խոսքի և երաժշտության հեղինակների անունների առկայությամբ) ելույթից առաջ պետք է ներկայացվեն մրցութային հանձնաժողովին առնվազն 5 օրինակից:

Տեղեկությունների համար դիմել Հայաստանի երաժշտական ընկերություն. հասցեն՝ Երևան, Սայաթ-Նովայի 15, հեռ.՝ (374-10) 58 04 23, 58 95 71:

Ստեղծագործական և գեղարվեստական հարցերով դիմել «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիա (374-10) 53 57 58:

Մրցույթի կազմկոմիտե

Հ Ա Յ Տ

«Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի
հանրապետական 8-րդ մրցույթի անցկացման

1. Երգչախմբի գործող վայրը, հեռախոսը ----------
(մարզ, քաղաք, գյուղ)
---

2. Կազմակերպության անվանումը ----------
(երգչախմբի ենթակայությունը)
---

3. Երգչախմբի պատասխանատուի անուն, ազգանունը----------

4. Երգչախմբի ղեկավարի անունը, ազգանունը----------

5. Կոնցերտմայստերի անունը, ազգանունը ----------

6. Տեղեկույթ երգչախմբի մասին ----------
(մրցույթին մասնակցելու կարգը, տարիքային խումբը, երգիչների թիվը, ստեղծման տարեթիվը)

---

7. Մրցույթի ծրագիրը ----------

Կազմակերպության տնօրեն՝ ----------
ստորագրություն

Երգչախմբի ղեկավար՝ ----------
ստորագրություն

« »---------- 2015 թ.

Մրցույթի կազմկոմիտե